ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ - 269 -2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «09» «06» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Գ. Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Միջազգային մշակութային համագործակցության իրականացում, սփյուռքի հետ համագործակցություն, հայ մշակույթի պահպանում») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կազմակերպել «Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ» ծրագրի իրականացումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,
2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,
2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,
2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,
2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,
2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,
2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,
2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,
2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,
2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից

մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 49511,4 հազար (քառասունինը միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. հունիսի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

5.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 27.02.2023 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄՇԴ-53-2023 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Իսահակյան 1
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 900018001736, հվհհ 01573197
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732	հեռ. 010583353
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Հ. Հակոբյան	Գ. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«09» «06» 2023 թ.
N ՄՇԴ-269-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումների

1	Կազմակերպության անվանում	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Իսահակյան 1, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
3	Ծրագրի անվանում	Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ
3.1	Բովանդակություն	Ս. թ. հունիսի 27-28-ը Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում նախատեսվում է կազմակերպել Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ, որոնք անցկացվելու են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների 2022-2023 թվականների օրացույցում ընդգրկված միջոցառումների շրջանակներում: Միջոցառումներից առաջինը՝ Ներսես Շնորհալուն նվիրված գիտաժողովը, կայանալու է ս.թ. հունիսի 27-ին: Գիտաժողովին ներկա կգտնվեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանի մշակույթի ոլորտը համակարգող պաշտոնյաներ, Ֆրանսիայի գիտական հանրության և հայ համայնքի ներկայացուցիչներ: Գիտաժողովին Հայաստանից զեկույցներով հանդես են գալու «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-հիմնադրամի 3 աշխատակիցներ, ինչպես նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 3 հոգևորականներ: Գիտաժողովին զուգահեռ, նույն օրը՝ հունիսի 27-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում կբացվի Ներսես Շնորհալուն նվիրված ցուցադրություն, իսկ հաջորդ օրը՝ հունիսի 28-ին տեղի կունենա համերգ որտեղ ելույթ կունենա Կամերային երաժշտության ազգային կենտրոնի «Հովեր» պետական կամերային երգչախումբը՝ Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցի նշանավորման շրջանակներում: 2021 թվականի նոյեմբերի 23-ին Փարիզում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի ժամանակ Հայաստանի կողմից ներկայացված Ս. Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների օրացույցում՝ 2022-2023 թթ. երկամյակի համար: «Հովեր» պետական կամերային երգչախումբը ներկայանալու է շուրջ 50 րոպե տևողությամբ համերգային ծրագրով, որն ընդգրկում է թեմատիկ

		բովանդակությանը համապատասխան կատարումներ՝ այդ թվում՝ Սբ. Ներսես Շնորհալու, Կոմիտասի (հոգևոր եւ աշխարհիկ), Էդուարդ Միրզոյանի, Վաչե Շարաֆյանի, Արթուր Ավանեսովի, Վոլֆրամ Բուխենբերգի ստեղծագործությունները և մեկ բուզանդական շարական: Համերգը ղեկավարելու են Սոնա Հովհաննիսյանը եւ Նարինե Ոսկանյանը: Համերգային ծրագիրը զուգակցվելու է կատարումներից յուրաքանչյուրի համար ստեղծված հատուկ տեսապատկերային բովանդակությամբ:
3.2	Նպատակ	Իրադարձության նպատակային առանցքում Սբ. Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց օրացույցում ներառված լինելու կարեւորագույն հանգամանքի նշանավորումն է եւ հանրահռչակումը, որը, «Հովեր» պետական կամերային երգչախմբի համերգի իրականացման արդյունքում կարժանանա միջազգային և տեղական ուշադրությանն ու հետաքրքրությանը:
3.3	Անցկացման ժամկետ	Հունիսի 27-29, 2023 թ.
3.4	Անցկացման վայր	Ֆրանսիա, Փարիզ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական
3.5	Ակնկալվող արդյունքներ	Սույն միջոցառումները կնպաստեն արդեն իսկ կարևոր իրադարձության՝ Սբ. Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցը ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակավոր մարդկանց եւ կարևոր իրադարձությունների հոբելյանների օրացույցում ներառված լինելու հանրահռչակմանը, կներկայացնի հայկական խմբերգային արվեստի դրսևորումները, թույլ կտա իրադարձությունը հանրահռչակել Սբ. Ներսես Շնորհալու՝ մինչեւ մեր օրեր փոխանցված ժառանգության կարևորությունն ու ազդեցությունները:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Իրականացվելու է 1 համերգ, ակնկալվող հանդիսատեսի քանակը 800: Ցուցահանդեսի մասնակիցների քանակը՝ 100, գիտաժողովի անդամները՝ շուրջ 150 անձ: Լսարանը՝ բազմալեզու, այդ թվում՝ հայեր եւ օտարերկրացիներ: Ապահովվելու է մատուցված նյութի հասանելիություն, իրադարձության հանրահռչակում մեդիահարթակներում:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032878, հվhh 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Կամերային երաժշտության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900013001736, հվhh 01573197
հեռ. 010583353
Տնօրեն՝
---------- Գ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 2
«09» «06» 2023 թ.
N ՄՇԴ-269 -2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեք (դրամ)	Ընդամենը գումար (հազար դրամ)
1	**Վարձակալության ծառայություններ**				**4046.7**
	Դահլիճ 4-ի վարձակալում (առանց մոնտաժման և ապամոնտաժման, բազային տեխնիկական ծառայությունները ներառյալ) 1 x 954 եվրո x 427 դրամ = 407,4 հ. դ.	հատ	1	407360	407.4
	Դահլիճ 1-ի վարձակալում (տեխնիկական ծառայությունները, հանդերձասրահների վարձակալումը ներառյալ) 1 x 6880 եվրո x 427 դրամ = 2937,8 հ. դ.	հատ	1	2937760	2937.8
	«Salle des Actes» սրահի հարևանությամբ գտնվող ճեմասրահի վարձակալում ցուցահանդեսի բացման արարողության համար 1 x 965 եվրո x 427 դրամ = 701,6 հ. դ.	հատ	1	701560	701.6
2	**Մասնակիցների ճանապարհածախս և կեցություն**				**27759.3**
	ավիատոմս՝ Երևան-Փարիզ-Երևան 37 հատ x 1000 եվրո (միջին գին) x 427 դրամ =13237,0 հ. դ.	հատ	37	427000	15799.0
	Ավտոբուսի վարձակալում, մասնակիցների և ուղեկցող անձանց համար (տրանսֆեր՝ օդանավակայան -հյուրանոց-օդանավակայան, հյուրանոց-ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնական-հյուրանոց) 2759 եվրո x 427դրամ = 1178,1 հ.դ.	օր	3	392700	1178.1
	Հյուրանոցային ծառայություններ				*5738.9*
	«Հովեր» կամերային երգչախումբ՝ 31 մարդ x 2 օր x 168 եվրո x 427 դրամ = 4447,6 հ. դ.	մարդ/օր	62	71736	4447.6
	Գիտաժողովի և ցուցահանդեսի մասնակիցներ՝ 6 մարդ x 3 օր x 168 եվրո x 427 դրամ = 1291,3 հ. դ.	մարդ/օր	18	71736	1291.2
	Օրապահիկ				*5043.3*
	«Հովեր» կամերային երգչախումբ՝ 31 մարդ x 3 օր x 127 եվրո x 427 դրամ = 5043,3 հ. դ.	մարդ/օր	93	54229	5043.3
	Անվտանգության ապահովման ծառայություններ				**1439.9**

3	Անվտանգության ապահովում «Salle des Actes» սրահի հարևանությամբ գտնվող ճեմասրահի 477 եվրո x 427 դրամ = 203,7 հ. դ.	հատ	1	203700	203.7
	Անվտանգության ապահովում Դահլիճ 4-ում 940 եվրո x 427 դրամ = 401,4 հ. դ.	հատ	1	401400	401.4
	Անվտանգության ապահովում Դահլիճ 1-ում (հյուրերի ժամանում, հակահրդեհային անվտանգություն և այլն) 1955 եվրո x 427 դրամ = 834,8 հ. դ.	հատ	1	834800	834.8
4	**Տպագրական և գովազդային ծառայություններ**	հատ			**2076.3**
	Հրավիրատոմսերի (համերգ, ցուցահանդես և գիտաժողով), համերգի ծրագրերի ձևավորում 3301 եվրո x 427 դրամ = 1409,5 հ. դ.	հատ	1	1409500	1409.5
	Տպագրություն՝ համերգի, ցուցահանդեսի և գիտաժողովի հրավիրատոմսեր 712 եվրո x 427 դրամ = 304,0 հ. դ.	հատ	1	304000	304.0
	Տպագրություն բուկլետ (ֆրանսերեն/անգլերեն)՝ 1400 հատ, ծրագիր (անգլերեն/ֆրանսերեն)՝ 1400 հատ, ՊՎԽ(80 սմ x 100 սմ)՝ 12 հատ	հատ	1	350000	350.0
	Հյուրերի մուտքի համար նախատեսված բեյջերի տպագրություն՝ 150 հատ x 0,20 ցենտ x 427 դրամ = 12,8 հ. դ.	հատ	1	12800	12.8
5	**Այլ կազմակերպական ծառայություններ**				**5337.3**
	Ցուցադրության մոնտաժում (23.06.2023 թ.) 503 եվրո x 427 դրամ = 214,8 հ. դ.	հատ	1	214800	214.8
	Ցուցադրության ապամոնտաժում (03.07.2023 թ.) 503 եվրո x 427 դրամ = 214,8 հ. դ.	հատ	1	214800	214.8
	Կոկտեյլ 56,39 եվրո x 100 մարդ x 427 դրամ = 2407,9 հ. դ.	հատ	1	2407900	2407.9
	Համաժամանակյա թարգմանություն՝ (անգլերեն և ֆրանսերեն) 2 մարդ, 2 ժամ 859 եվրո x 427 դրամ =733,6 հ. դ.	մարդ/ժամ	4	183400	733.6
	Բացման արարողության *(ցուցահանդեսի, համերգի)* ընթացքում ծառայությունների փաթեթ 1 x 702 եվրո x 427 դրամ = 299.8 հ. դ.	հատ	1	299800	299.8
	Ցուցադրություն էկրանին 1 x 496 եվրո x 427 դրամ = 211,8 հ. դ.	հատ	1	211800	211.8
	Հյուրընկալի ծառայություն ցուցահանդեսի և համերգի ընթացքում՝ 8 մարդ x 177 եվրո x 427 դրամ = 604,6 հ. դ.	հատ	1	604600	604.6

	Տեսանյութի և տեսաշարի պատրաստում համերգի ընթացքում ցուցադրելու համար (30-40 րոպե տևողությամբ)	հատ	1	650000	650.0
6	**Հուշանվերի ձեռք բերում** 5 հատ x 20,0 հ. դ. = 100,0 հ. դ.	հատ	5	20000	100.0
7	**Վարձատրություն** *(ներառյալ հարկերը)**				**500.0**
	Համակարգող	մարդ	1	150000	150.0
	Համակարգող (ֆինանսական)	մարդ	1	200000	200.0
	Ցուցահանդեսի նյութերի և համերգային ծրագրերի ներդիրի ձևավորող	մարդ	1	150000	150.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				41259.5
	ԱԱՀ**				8251.9
	ԱՄԲՈՂՋԸ				49511.4

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

**** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Կամերային երաժշտության
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Իսահակյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018001736, հվհհ 01573197
հեռ. 010583353
Տնօրեն
Գ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«09» «06» 2023 թ
N ՄՇԴ-269-2023 պայմանագր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատո

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«09» «06 » 2023 թ.
N ՄՇԴ-263-2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝